ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Պրոֆ. Հ. Ե. ԹՈՒՄԱՆՅԱՆ

Բնակչության աճի օրինաչափություններ

Բնակչության աճը, ինչպես հայտնի է, տեղի է ունենում երկու ձևով՝ ինտենսիվ և էքստենսիվ։ Բնակչության բնական աճը էքստենսիվ է, երբ թիպետ ծնունդը կատարվում է բարձր տոկոսով, սակայն մահացության տոկոսն էլ դրանից մի փոքր է ցածր, ուստի և ծնունդը շնչին չափով է գերազանցում մահացությանը, ու այդ տարբերությամբ է աճում բնակչությունը։ Բնակչության էքստենսիվ աճի օրինակ է հենց նախառևոլյուցիոն Հայաստանի բնակչության աճը, որը երևում է ստորև բերվող տվյալներից։

Ծնունդը, մահացությունը և բնակչության բնական աճը նախկին Երևանի նահանգում։
Յուրաքանչյուր 1000 շնչին հաշվում է

Տարիներ	Ծնունդ	Մահացություն	Աճ
1864	35,4	34,8	0,6
1884—1885	34,9	18,9	16
1891—1895	36,4	25,7	10,7
1896—1900	36,7	21,3	15,4
1901—1905	32,9	20,1	12,8
1906—1910	34,7	22,9	11,8
1911—1914	34,8	18,6	16,2
Միջին 1864—1914	35,2	23,2	12

Այսպիսով՝ հիսուն տարվա միջին տվյալները ցույց են տալիս, որ նախկին Երևանի նահանգում յուրաքանչյուր 1000 շնչին հասել է տարեկան 35,2 ծնունդ և 23,2 մահացություն, ուստի և աճը կազմել է ընդամենը 12 մարդ կամ 1,2 տոկոս։ Մահացության բարձր տոկոսի հետևանքով նախառևոլյուցիոն Հայաստանում կյանքի միջին տևողությունը չէր անցնում 30—35 տարուց, որ նշանակում է, թե բնակչության վերարտադրությունը կատարվում էր սերնդի արագ փոխարինմամբ։ Բնակչության աճի և վերարտադրության էքստենսիվ տիպը ցույց է տալիս միաժամանակ երկրի տնտեսական ու կուլտուրական զարգացման ցածր մակարդակը։

Սովետական կարգերի հաղթանակով փոխվեց նաև Հայաստանի բնակչության վերարտադրության օրինաչափությունը, բնակչության աճի էքստենսիվ տիպը տեղի տվեց նրա ինտենսիվ տիպին, որը երևում է հետևյալ տվյալներից։ Եթե նախառևոլյուցիոն շրջանում Հայաստանի բնակչության բնական աճը կազմում էր 1,2 տոկոս, ապա սովետական շրջանում այդ աճը բարձրացավ ավելի քան 2,5 անգամ։ Այսպես՝ 1926—1939 թթ. մարդահամարի շրջանում տարեկան միջին աճը կազմեց 3,3 տոկոս։ Հայաստանի բնակչության

բնական աճի շնորհիվ էական փոփոխության ենթարկվեց նրա տարիքային կազմը և մեծացավ կյանքի միջին տևողությունը։ Բնակչության աճի սոցիալիստական օրենքի գործողությունները շատ լայն ասպարեզ ստացան Հայաստանում մասնավորապես հետպատերազմյան շրջանում։ 1961—1962 թթ. Սովետական Հայաստանի բնակչության յուրաքանչյուր 1000 շնչին հասնող միջին տարեկան ծնունդը կազմել է 36,3 մարդ, որի շնորհիվ բնական աճը յուրաքանչյուր հազարին կազմել է 29,7 մարդ կամ 3,0 տոկոս։ Հետաքրքրական է հիշյալ տվյալները համեմատել կապիտալիստական մի շարք երկրների համապատասխան ցուցանիշների հետ։

Ծնունդը, մահացությունը և բնակչության բնական աճը Հայկական ՍՍՌ-ում և կապիտալիստական երկրներում 1959 թ.

Երկրներ	Բնակչության 1000 շնչին հասնում է ծնունդ	Բնակչության 1000 շնչին հասնում է մահացություն	Բնակչության 1000 շնչին հասնում է բնական աճ
Հայկական ՍՍՌ	41,0	7,9	33,1
ԱՄՆ	24,1	9,4	14,7
Ֆրանսիա . . .	18,4	11,3	7,1
Իտալիա . . .	18,4	9,3	9,7
ԳՖՌ	17,6	10,8	6,8
Ճապոնիա . .	17,5	7,4	10,1
Անգլիա	16,9	11,7	5,2

Հայաստանի բնակչության աճի տեմպերը առաջավոր կապիտալիստական երկրների բնակչության աճի տեմպերի հետ համեմատելիս տեսնում ենք, որ դրանք գերազանցում են ԱՄՆ-ից ավելի քան 2 անգամ, Ֆրանսիայից՝ ավելի քան 4 անգամ, Իտալիայից՝ 3 անգամ, ԳՖՌ-ից՝ մոտ 5 անգամ, Ճապոնիայից՝ 3 անգամ և Անգլիայից՝ 6 անգամ։ Բնակչության աճի նման օրինաչափությունները հետևանք չեն ոչ աշխարհագրական պայմանների, ոչ բիոլոգիական օրենքների և ոչ էլ ռասայական առանձնահատկությունների։ Հայաստանի բնակչության աճի տեմպերի սուր տարբերությունները կապիտալիստական երկրների բնակչության աճի տեմպերից պայմանավորված են սոցիալիստական արտադրահարաբերությունների արմատական տարբերությամբ կապիտալիստականից։ Ի հակադրություն կապիտալիզմի, սոցիալիզմն ստեղծում է բնակչության վերարտադրության միանգամայն նպաստավոր պայմաններ։ Ննդի բարձր տոկոսի պայմաններում մահացության տոկոսի խիստ կրճատվելը Հայաստանում հետևանք է բնակչության կյանքի և աշխատանքի պայմանների արմատական բարելավման, հիվանդությունների շատ տեսակների իսպառ վերացման, բնակչության ֆիզիկական զարգացման և բազմաթիվ այլ նպաստավոր գործոնների։ Մենք տեսանք, որ նախասովետական շրջանում յուրաքանչյուր հազար բնակչին մահացություն է հասնում 23,2 մարդ, մինչդեռ սովետական շրջանում՝ ընդամենը 7,9 մարդ։ Բնակչության մահացության անկումը ուղղակի հետևանք է նյութական բարեկեցության և բուժսպասարկման բարձրացման։ Բժիշկների թիվը (առանց ատամնաբույժների) 1913 թ. կազմում էր 57, իսկ 1961 թ. այն հասել էր 4551-ի կամ ավելացել 7,5 անգամ։ Հիվանդանոցային մահճակալների թիվը 1913 թ. 212-ից 1961 թ. հասել էր 14100-ի կամ ավելացել 6,5 անգամ։ 1961 թ. Հայաստանի յուրաքանչյուր 10000 բնակչին հասնում էր 23,2 բժիշկ, մինչդեռ ԱՄՆ-ում յուրաքանչյուր

10000 բնակչին հասնում էր 12 բժիշկ, Ֆրանսիայում՝ 10,7, Ճապոնիայում՝ 10,3։ ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1961—1980 թթ. համար գլխավոր հեռանկարով նախատեսվում է բնակչության պահանջների լիակատար բավարարումը սպասարկման ասպարեզում։ ՍՄԿՊ ծրագրում նշվում է, որ հատուկ ուշադրություն պետք է դարձնել «քաղաքում և գյուղում մոր և մանկան առողջության պահպանման հիմնարկների (ծննդատներ, կոնսուլտացիաներ, մանկական սանատորիաներ ու հիվանդանոցներ, դպրոցներ և այլն) ցանցի ծավալմանը»[1]։ Բնակչության աճի օրինաչափություններին համապատասխան շատ մեծ փոփոխության ենթարկվեց Հայաստանի բնակչության թվաքանակը։ Հայաստանի բնակչության վերաբերյալ տվյալները մենք վերցնում ենք մարդահամարներից և տարեկան հաշվառումներից։ Համառուսաստանյան առաջին մարդահամարը տեղի է ունեցել 1897 թ. հունվարի 28-ին։ Այդ մարդահամարի տվյալներով Հայաստանի այժմյան տերիտորիայում բնակչության ընդհանուր թիվը կազմել է կլոր թվով 798 հազար մարդ։ 1913 թ. այդ քանակությունը հասավ մեկ միլիոն մարդու կամ 16 տարվա ընթացքում ավելացավ 202 հազարով։ Առաջին համաշխարհային պատերազմի և դաշնակների անփառունակ տիրապետության կարճատև շրջանում Հայաստանի բնակչությունը ոչ միայն չավելացավ, այլ խիստ պակասեց և 1920 թ. վերջին կազմեց ընդամենը 780 հազար մարդ։ Սովետական ժամանակաշրջանում համամիութենական առաջին մարդահամարն անցկացվեց 1926 թ. հունվարի 17-ին, ըստ որի Հայաստանի բնակչությունը կազմում էր 881,3 հազար մարդ։ Համամիութենական երկրորդ (1939 թ.) մարդահամարի տվյալներով Հայաստանի բնակչությունը հասավ 1.282.338 մարդու, իսկ 1959 թ. հունվարի 15-ի մարդահամարի տվյալներով՝ 1.763 հազարի։ Հաշվարկումներից պարզվում է, որ 1964 թ. հունվարին Հայաստանի բնակչությունը կազմել է ոչ պակաս, քան 2.070 հազար մարդ։

Սովետական Հայաստանի բնակչության աճի հետևանքով, որ կատարվել է նրա տերիտորիայի անփոփոխության պայմաններում, խիստ բարձրացել է մեկ քառակուսի կիլոմետրին ընկնող բնակչության խտությունը։ Դա երևում է, ստորև բերվող աղյուսակի տվյալներից։

Հայաստանի բնակչության թվի և խտության հետ կատարված փոփոխությունները[2]

	Տերիտորիան հազար քառակուսի կիլոմետրերով	Բնակչությունը հազարներով	Բնակչության խտությունը (մեկ կիլոմետրին հասնում է բնակիչներ)
1913 թ.	29,8	1000,1	33,6
1926 թ. (ըստ դեկտեմբ. 17-ի մարդահամարի)	29,8	881,3	29,6
1939 թ. (ըստ հունվարի 17-ի մարդահամարի տվյալների)	29,8	1282,3	43
1959 թ. (ըստ հունվարի 15-ի մարդահամարի տվյալների)	29,8	1763	59,2
1962 թ. գնահատված առ 1-ը հունվարի	29,8	1957,8	65,7
1964 թ. հաշվարկված է առ 1-ը հունվարի դրությամբ	29,8	2070	69,5

1 «ՍՄԿՊ ծրագիրը», Երևան, 1961, էջ 115։

2 Բոլոր տվյալները, բացառությամբ 1964 թ., որը հաշվարկել ենք մենք, բերվում են ըստ «Итоги Всесоюзной переписи населения 1959 года. Армянская ССР» գրքի. Մոսկվա. 1963, էջ 11։

Այսպիսով 1913—1963 թթ. ժամանակամիջոցում Հայաստանի բնակչության թիվն ավելի քան կրկնապատկվել է։ Այն կատարվել է մի կողմից բնակչության բնական և մեխանիկական աճի, ինչպես նաև արտասահմանի հայերի հայրենադարձության հաշվին։ Սովետական իշխանության առաջին քսան տարիներին Հունաստանից, Ֆրանսիայից և այլ երկրներից Հայաստան վերադարձան 35 հազար հայեր։ Հետպատերազմյան շրջանում արտասահմանյան երկրներից հայրենիք՝ Սովետական Հայաստան վերադարձան ավելի քան 110 հազար հայեր։ Հայրենադարձությունը շարունակվելու է նաև այսուհետև։

Բնակչության աճի ուսումնասիրությունից մենք իմացանք, որ երկարատև ժամանակաշրջանում Հայաստանի բնակչության միջին տարեկան աճը կազմում էր 2,75 տոկոս։ Գալիք ժամանակաշրջանի համար, եթե այդ աճը ընդունենք 2,7 և հենվենք 1959 թ. մարդահամարի տվյալների վրա, կստանանք Հայաստանի բնակչության բացարձակ և հարաբերական աճի այսպիսի պատկեր.

	Բնակչության թիվը հազարներով	Տոկոսներով 1959 թ. նկատմամբ
1959 թ. հունվար	1763	100
1971 թ. հունվար	2420	137
1981 թ. հունվար	3150	173

Բնակչության այս թվի վրա պետք է ավելացնել նաև արտասահմանյան երկրներից կազմակերպվելիք ներգաղթը 250 հազար մարդու հաշվով։ Այսպիսով, մի կողմից Հայաստանի բնակչության բնական ինտենսիվ աճը, մյուս կողմից արտասահմանից հայերի ներգաղթը և բնակչության մեխանիկական աճը խոշոր չափով կավելացնեն ռեսպուբլիկայի բնակչությունը գալիք 15—20 տարիների ընթացքում։ Այսպիսով, կոմունիստական շինարարության տարիներին Հայաստանի բնակչությունը աճել է շատ բարձր տեմպով, որի հետևանքով բնակչության ընդհանուր թիվը 1980 թ. 1920 թ. համեմատությամբ ավելացած կլինի 4,7 անգամ։ Դրա հետ միասին արդյունաբերության արտադրանքը միշտ էլ աճել է։ Բնակչության աճը մի քանի անգամ գերազանցող տեմպերով և բացառել թշվառություն, աղքատություն և տգիտություն կատեգորիաները, որոնց գոյության փաստը կապիտալիստական երկրներում բուրժուական տնտեսագետները վերագրում են բնակչության աճից իբրև թե շատ ետ մնացող գոյամիջոցների աճման տեմպերին։

Քաղաքային և գյուղական բնակչությունը

Ժամանակակից պայմաններում գրեթե բոլոր երկրներում բնակչությունը բաշխված է քաղաքի և գյուղի միջև, բայց բոլորովին տարբեր համամասնություններով։ Հիշյալ համամասնությունների էությունն ու բնույթը մեծապես կախված է տվյալ երկրի ժողովրդական տնտեսության կառուցվածքից ու զարգացման մակարդակից։ Ընդհանուր օրինաչափությունը, սակայն, այն է, որ զարգացումը տանում է դեպի բնակչության ընդհանուր թվի մեջ քաղաքային

բնակչության տեսակարար կշռի ավելացումը։ Քաղաքային բնակչության տեսակարար կշռի հետզհետե բարձրանալը, որպես օրինաչափ երևույթ, խիստ հատկանշական է սոցիալիստական երկրներին, մասնավորապես ՍՍՌՄ-ին, այդ թվում նաև Սովետական Հայաստանին։

Նախասովետական շրջանում այժմյան Սովետական Հայաստանի տերիտորիայում քաղաքային բնակչության տեսակարար կշիռը ամբողջ բնակչության մեջ ոչ միայն չէր բարձրանում, այլ, ընդհակառակը, դնալով պակասում էր։ Այսպես՝ եթե 1897 թ. քաղաքային բնակչությունը կազմում էր ամբողջ բնակչության 11,1 տոկոսը, ապա 1913 թ. այն կազմում էր ընդամենը 10,4 տոկոս։ Նախասովետական Հայաստանի քաղաքային բնակչության տեսակարար կշռի իջնելը մատնացույց էր անում երկրի կիսագաղութային բնույթը։ Կապիտալիստական հարաբերությունները, ներթափանցելով գյուղ, քայքայում էին մանր արտադրողներին, բայց արդյունաբերության թույլ զարգացած լինելու և զարգացման հեռանկարներ չունենալու հետևանքով Հայաստանի քաղաքները դեպի իրենց չէին քաշում պրոլետար դարձած գյուղացիներին, ուստի և վերջիններս աշխատանք ու ապրուստ էին որոնում Հայաստանից դուրս՝ Անդրկովկասի արդյունաբերական կենտրոններում, Ռուսաստանում և նույնիսկ արտասահմանում։ Առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմին նախորդող տարիներին Երևանի նահանգի գյուղական բնակչությունից ռուսական կայսրության սահմաններում արտագնացության էին դիմել տարեկան 25 հազար մարդ, իսկ սրանից դուրս՝ 2 հազար մարդ։ Եթե նկատի ունենանք, որ այդ ժամանակ Հայաստանի տերիտորիայի վրա աշխատող արդյունաբերական բանվորների թիվը չէր անցնում 5 հազարից, ապա պարզ կդառնա, թե ինչու քաղաքային բնակչության աճը սահմանափակվում էր լոկ բնակչության բնական աճով։

Սոցիալիստական արտադրահարաբերությունների ստեղծմամբ փոխվեցին քաղաքային և գյուղական բնակչության աճի օրինաչափությունները։ Դեռևս 1926 թ. Հայաստանի քաղաքային բնակչության տեսակարար կշիռը 1913 թ. համեմատությամբ գրեթե կրկնապատկվել էր և կազմել ամբողջ բնակչության 19 տոկոսը, իսկ 1940 թ. այն հասավ 30 տոկոսի։ 1926—1940 թթ. ժամանակամիջոցում Հայաստանի քաղաքային բնակչությունն աճել էր մոտ 200 հազար մարդով։ Հիշյալ քանակությունից միայն 80 հազարն էր քաղաքային բնակչության բնական աճը, մնացած 120 հազարը հետևանք էր տնտեսական ու սոցիալական այն վերափոխումների, որոնք կատարվել էին սոցիալիստական արտադրահարաբերությունների հաղթանակի հետևանքով։ Սոցիալիստական ինդուստրացման շնորհիվ նախկին գյուղական վայրերից մի քանիսը վերափոխվեցին քաղաքների և բանվորական ավանների, կոլտնտեսային արտադրության տեխնիկական վերակառուցման հիման վրա որոշակի թվով գյուղական բնակչություն գյուղից անցավ քաղաք և, վերջապես, քաղաքային բնակչությունը աճում էր նաև դրսից եկածների հաշվին։

Հետպատերազմյան շրջանում ավելի քան բարձր տեմպերով աճեց քաղաքային բնակչությունը, մասնավորապես ի հաշիվ նորաստեղծ գյուղական վայրերը քաղաքների ու բանվորական ավանների վերածելու, ինչպես նաև գյուղական բնակչության որոշ մասը պլանաչափորեն քաղաքային բնակչության վերածելու ճանապարհով։ Այդ ամենի հետևանքով Հայաստանի քաղա-

քային և գյուղական բնակչության քանակը ենթարկվեց այսպիսի փոփոխության.

Հայաստանի բնակչության բաշխվածությունն ըստ քաղաքի և գյուղի

	Ամբողջ բնակչությունը հազարներով	Այդ թվում		Տեսակարար կշիռը	
		քաղաքային	գյուղական	քաղաքային բնակչության	գյուղական բնակչության
1913 թ.	1000,1	104	896,1	10	90
1926 թ. (դեկտեմբերի 17-ի մարդահամարի տվյալներով)	881,3	167,1	714,2	19	81
1939 թ. (հունվարի 17-ի մարդահամարի տվյալներով) .	1.282,3	366	915,9	29	71
1959 թ. (հունվարի 15-ի մարդահամարի տվյալներով)	1763	881,8	881,2	50	50
1962 թ. (հունվարի 1-ի դրությամբ)	1957,8	1030	927,6	53	47

Այսպիսով, սոցիալիստական շինարարության տարիներին էական փոփոխության է ենթարկվել հարաբերակցությունը քաղաքային և գյուղական բնակչության միջև։ Եթե 1962 թ. սկզբին 1913 թ. համեմատությամբ ամբողջ բնակչությունը մոտավորապես կրկնապատկվել է, ապա քաղաքային բնակչությունը ավելի քան տասնապատկվել է, ուստի քաղաքային բնակչության տեսակարար կշիռը 1913 թ. 10 տոկոսից, 1962 թ. սկզբին հասել է 53 տոկոսի։ Քաղաքային և գյուղական բնակչության միջև քանակական հարաբերակցությունը այսուհետև էլ կենթարկվի խիստ փոփոխությունների հօգուտ քաղաքայինի։

ՍՍՌՄ-ում, կոմունիզմի նյութատեխնիկական բազայի կառուցման պրոցեսում, ներկայումս գոյություն ունեցող գյուղերի մի մասն անխուսափելիորեն վերածվելու է քաղաքների և այդ գյուղերի բնակչությունը դառնալու է քաղաքային բնակչություն։ Զարգացման այդ տենդենցն առավել շեշտված տեմպով կդրսևորվի Հայաստանում, քանի որ հողային տարածությունները խիստ սահմանափակ են, ուստի և բնակչության աճող մասի հաշվին պետք է ինտենսիվ կերպով ավելանա քաղաքային բնակչությունը։ Գյուղատնտեսության մեջ աշխատանքի արտադրողականության բարձրացումը և գյուղատնտեսական մշակույթների համար պիտանի հողերի սահմանափակությունը կհասցնի նրան, որ գյուղական բնակչության որոշ մասը կանցնի քաղաք։

Ելխավոր հեռանկարի ժամանակամիջոցում կառաջանան մի շարք նոր քաղաքներ և կաճի համեմատաբար փոքր քաղաքների բնակչությունը։ Ըստ երևույթին հարկ կլինի Երևան քաղաքի բնակչության ավելացումը հետագայում սահմանափակել միայն նրա բնական աճով, նույն կերպ հարկ կլինի վարվել նաև Լենինական քաղաքի հետ։ Ելխավոր հեռանկարի ժամանակամիջոցում քաղաքային բնակչությունը մեծ չափով կաճի նոր ձևավորվող քաղաքներում և արդյունաբերական կենտրոններում, որպես արդասիք արտադրողական ուժերի նոր տեղաբաշխման։ Ի տարբերություն քաղաքային բնակչության, որը վերևում մատնանշված պատճառների շնորհիվ աճելու է բուռն կերպով, Հայաստանի գյուղական բնակչությունը գրեթե չի աճի։ Այդպիսին են լինելու Հայաստանի քաղաքային և գյուղական բնակչության աճի հեռանկարները։ Դրա

[1] „Итоги всесоюзной переписи населения 1959 года. Армянская ССР", էջ 11։

հետ միասին էական փոփոխություններ կկրի գյուղական բնակչության ապրելակերպը։ Կոլտնտեսությունների մի մասը կվերածվի սովխոզների, մյուսներն էլ կխոշորացվեն, ուստի և հնարավորություն կստեղծվի այդ խոշոր կոլտնտեսություններում կառուցել կոմպլեկտավորված դպրոցներ, ակումբներ, թատրոններ, գյուղատնտեսական հումք վերամշակող ձեռնարկություններ։ Գյուղերն իրենց արտադրական ու կենցաղային հատկանիշներով հետզհետե կմոտենան քաղաքներին, որը և կնշանակի քաղաքի և գյուղի միջև գոյություն ունեցող էական տարբերությունների լիկվիդացում։

Բնակչության կրթությունը

Նախառևոլյուցիոն Հայաստանում, որը Ռուսաստանի ծայրամասերից մեկն էր և, ըստ էության, գաղութը, խոսք անգամ չէր կարող լինել ժողովրդի կրթության, նրա կուլտուրական մակարդակի բարձրացման նկատմամբ քիչ թե շատ հոգատարության մասին։ 1913 թ. ցարական ինքնակալությունը այժմյան Հայաստանի տերիտորիայի վրա յուրաքանչյուր բնակչի հաշվով ծախս էր կատարում մոտ 5 անգամ ավելի պակաս, քան կայսրության կենտրոնական նահանգներում։ Մատնանշենք սակայն, որ այդ հատկացումների 80 տոկոսը գնում էր ոստիկանական ապարատի պահպանմանը, 10 տոկոսը զանազան ուրիշ նպատակների և վերջին 10 տոկոսը միայն ծախսվում էր ժողովրդական կրթության ու առողջապահության վրա։ Ըստ վիճակագրական տվյալների՝ 1913 թ. Հայաստանի ներկայիս տերիտորիայի վրա ժողովրդական կրթության ծախսերը մեկ շնչի հաշվով չեն անցել տարեկան 39 կոպեկից։ Հասկանալի է, որ այդ պայմաններում ժողովուրդը խարխափում էր խավարի ու տգիտության մեջ։ Ահա թե ինչու դեռևս 1913 թ. Վ. Ի. Լենինը նշում էր. «Այնպիսի վայրենի երկիր, որտեղ ժողովրդական մասսաները այնքան կողոպտված լինեն կրթության, լույսի և գիտության իմաստով, այդպիսի երկիր Եվրոպայում չի մնացել և ոչ մի հատ, բացի Ռուսաստանից։ Եվ ժողովրդական մասսաների, առանձնապես գյուղացիների այս վայրենացածությունը պատահական չէ, այլ անխուսափելի է կալվածատերերի ճնշման պայմաններում... Ռուսաստանի ճորտատիրական պետական կառուցվածքի շնորհիվ երիտասարդ սերնդի չորս հինգերորդը անգրագիտության է դատապարտված»[4]։

1897 թ. մարդահամարի տվյալներով 9—49 տարեկան բնակչության մեջ գրագետների տեսակարար կշիռը կազմում էր ընդամենը 9,2 տոկոս, այդ թվում կանայք՝ 2,9 տոկոս։ Այսպիսով, ամբողջ բնակչության ավելի քան 90 տոկոսը տառապում էր անգրագիտությամբ։ Պետք է մատնանշել, որ ընդհուպ մինչև սովետական կարգերի հաստատումը այդ դրությունը ոչ միայն այս կամ այն չափով չէր փոխվում դեպի լավը, այլ ընդհակառակը, ավելի ու ավելի էր վատթարանում։

1914—1915 ուսումնական տարում ընդհանուր և մասնագիտական կրթությունը Հայաստանում այսպիսի պատկեր ուներ։ Բոլոր տիպի դպրոցներում սովորողների թիվը կազմում էր 34,8 հազար, որից 32,4 հազարը սովորում էին 1—4 դասարաններում, 5—10 դասարաններում սովորողների թիվը կազմում էր ընդամենը 2,4 հազար, 0,1 հազար մարդ սովորում էր մասնագիտա-

---

[4] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 19, էջ 153—154։

կան դպրոցներում։ Եթե հիշենք, որ այդ ժամանակ բնակչության ընդհանուր թիվը կազմում էր մեկ միլիոն մարդ, ապա պարզ կդառնա կրթության գործի ողորմելի վիճակը։

Դրությունն արմատապես փոխվեց Հայաստանում սովետական կարգերի հաստատմամբ։ Երկրի ինդուստրացման ու գյուղատնտեսության կոլեկտիվացման բազայի վրա սովետական պետությունն իրականացրեց կուլտուրական ռևոլյուցիա։ Ստորև բերում ենք ընդհանուր և մասնագիտական կրթության զարգացումը ցույց տվող մի ամփոփիչ աղյուսակ.

Ուսումնական տարվա սկզբին (հազարներով)

	Հանրակրթական դպրոցի 1—4 դասարան	Հանրակրթական դպրոցի 5—10 դաս. և միջն. մասնագիտ. դպրոցներում	Բարձրագույն ուսումնական հաստատութ.	Ընդամենը
1914/15 թ.	32,4	2,4	0,1	34,9
1927/28 թ.	72,8	15,2	1,6	89,6
1940/41 թ.	196,4	145,4	11,1	352,9
1950/51 թ.	188,4	141	15,1	344,5
1961/62 թ.	198,7	188	22,1	408,8

Թե ինչպիսի թափով է բարձրացել Հայաստանի բնակչության կրթական մակարդակը, երևում է նախ նրանից, որ եթե բնակչությունը 1961 թ. 1914 թ. համեմատությամբ մոտավորապես կրկնապատկվել է, ապա սովորողների թիվն ավելացել է 11,7 անգամ։ Դպրոցական ցանցի լայն տարածման հիման վրա սովետական իշխանության տարիներին իսպառ վերացավ անցյալից ժառանգություն մնացած անգրագիտությունը։ Այդ երևում է ստորև բերվող աղյուսակի տվյալներից։

9—49 տարեկան հասակի բնակչության
գրագիտությունը 1897, 1926, 1939 և 1959 թթ.
(%-ով ամբողջի մեջ)

Թվականը	Ամբողջը	Տղամարդիկ	Կանայք
1897	9,2	14,5	2,9
1926	38,7	53,7	22,7
1939	83,9	92,7	74,7
1959	98,4	99,2	97,6

Դրա հետ միասին խիստ կերպով բարձրացել է բնակչության կրթական մակարդակը։ 1959 թ. մարդահամարի տվյալներով 10 և ավելի տարիքի բնակչության յուրաքանչյուր 1000 հոգուն հասնում էր բարձրագույն կրթությունն ավարտած 39 մարդ, թերի բարձրագույն ու միջնակարգ կրթությամբ՝ 406 մարդ և տարրական ու յոթնամյա կրթությամբ՝ 248 մարդ։

Ժողովրդական կրթության մակարդակի բարձրացման հիման վրա սոցիալիստական շինարարության տարիներին ձևավորվեց ռեսպուբլիկայի ժողովրդական մտավորականությունը։ Հայաստանի ժողովրդական տնտեսության և մշակույթի ճյուղերում 1960 թ. սկզբին աշխատում էին բարձրագույն կրթությամբ մոտ 39 հազար մասնագետ և միջին մասնագիտական կրթությամբ՝ 32 հազար։ Բարձրագույն կրթություն ունեցողների մեջ ժողովրդական տնտեսության համար բացառիկ կարևորություն են ներկայացնում ինժեներներն ու

գյուղատնտեսները, որոնք հանդես են գալիս որպես արտադրության հրամանատարներ։

Ժողովրդական կրթության աճին համապատասխան աճում են և պետական ծախսերն այդ նպատակի համար։ Միջնակարգ դպրոցի յուրաքանչյուր շրջանավարտի վրա միջին հաշվով պետությունը ծախսում է 3 հազար ռուբլի, իսկ յուրաքանչյուր ինժենների պատրաստման վրա ուսման 15 տարիների ընթացքում ծախսվում է ավելի քան 8 հազար ռուբլի (ներառյալ նաև թոշակը)։ Սոցիալիզմի պայմաններում, սակայն, այդ ծախսերն արդարացնում են իրենց։ Գիտության և տեխնիկայի զարգացման ներկա աստիճանում, երբ արդյունաբերության մեջ վճռական նշանակություն է ստացել բանվորների կողմից արտադրության տեխնիկայի և տեխնոլոգիայի հիմունքներին տիրապետելը, գիտության ու կրթության վրա կատարվող ծախսերը շատ արդյունավետ են։ Դրա հետ միասին ժողովրդական կրթության և գիտության վրա կատարվող ներդրումները բարձրացնում են ամբողջ բնակչության կուլտուր-տեխնիկական մակարդակը, որն այնքան կարևոր է հասարակական աշխատանքի արտադողականության անշեղ վերելքն ապահովելու և այդ հիման վրա մեր երկրում կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման խնդիրը լուծելու համար։

Աշխատունակ բնակչության զբաղմունքը

Նախասովետական Հայաստանում բնակչության ինը տասներորդն զբաղվում էր գյուղատնտեսությամբ։ Սոցիալիստական արտադրաեղանակի ստեղծման պրոցեսն այստեղ զուգորդվեց բնակչության սոցիալական կառուցվածքի, նրա դասակարգային կազմի փոփոխությունների հետ։ Հիշյալ փոփոխությունները շատ ցայտուն կերպով դրսևորվեցին մասնավորապես երկրի ինդուստրացման և գյուղատնտեսության կոլեկտիվացման տարիներին։ Այդ երևում է ստորև բերվող տվյալներից։

Հայաստանի բնակչության դասակարգային կազմը 1926 և 1935 թթ.
(տոկոսներով ընդհանուր թվի համեմատ)[5]

	1926 թ.	1935 թ.
1. Բանվոր-ծառայողներ	12,69	23,31
2. Կոլտնտեսականներ և կոոպերացված տնայնագործներ ու արհեստավորներ	0,08	60,85
3. Մենատնտես գյուղացիներ, չկոոպերացված արհեստավորներ և տնայնագործներ (առանց կուլակների)	76,19	11,76
4. Բուրժուազիա	7,62	0,20
այդ թվում կուլակներ	5,47	0,20
5. Այլ բնակչություն (սովորողներ, բանակ, թոշակառուներ և այլք)	3,42	3,53

Այսպիսով, էկոնոմիկայում կատարված սոցիալիստական վերափոխումները դեռևս նախապատերազմյան տարիներին արմատապես փոխեցին Հայաստանի բնակչության սոցիալական կազմը։ Բնակչության 85 տոկոսը զբաղ-

5 «Խորհրդային Հայաստանի 15 տարին թվերով», Երևան, 1935, էջ 24 և 25։

ված էր սոցիալիստական տնտեսության մեջ։ Երկրի աշխատանքային ռեսուրսների օգտագործման սոցիալիստական հատվածը քաղաքում և գյուղում բացարձակորեն գարձել էր տիրապետող, կուլակությունը վերացված էր, իսկ մանր ապրանքային տնտեսությունը աշխատուժի օգտագործման մեջ չնչին տեսակարար կշիռ ուներ։

Սոցիալիստական շինարարությանը համընթաց, գնալով աճեց բանվոր-ծառայողների քանակը աշխատանքային հասակ ունեցող բնակչության մեջ։ Այն դեպքում, երբ ամբողջ բնակչությունը 1928—1940 թթ. ավելացել էր 1,5 անգամ, բանվոր-ծառայողների թիվն ավելացել էր 3,4 անգամ։ Ժողովրդական տնտեսության զարգացումն ուղեկցվեց նյութական արտադրության ճյուղերում նորանոր կադրերի ընդունման հետ։ Եթե ռեսպուբլիկայի բանվոր-ծառայողների թիվը 1940 թ. կազմում էր 142 հազար մարդ, ապա 1959 թ. այն կազմեց մոտ 387 հազար, որի ավելի քան 33 տոկոսը արդյունաբերության մեջ աշխատող բանվորներ էին։ Աշխատունակ բնակչության զբաղվածության ասպարեզում կապիտալիզմի նկատմամբ սոցիալիզմի կարևոր առավելություններից մեկն էլ այն է, որ այստեղ գոյություն չունի որևէ սահմանափակում կանանց աշխատանքի ասպարեզում։ Կանայք կազմում են աշխատունակ բնակչության կեսը և մեծ տեսակարար կշիռ ունեն հատկապես ժողովրդական առողջապահության, հասարակական սննդի, լուսավորության, թեթև արդյունաբերության ճյուղերում։ Հայաստանում կանայք կազմում են ժողովրդական տնտեսության մեջ զբաղված բոլոր բանվոր-ծառայողների թվի 37 տոկոսը, այդ թվում ժողովրդական առողջապահության մեջ՝ 79 տոկոսը, լուսավորության մեջ՝ 56, հասարակական սննդում՝ 59, սովետական տնտեսություններում՝ 47, արդյունաբերության մեջ՝ 40 տոկոսը և այլն։ 1959 թ. մարդահամարի տվյալներով ռեսպուբլիկայի աշխատանքային հասակ ունեցող բնակչությունը կազմել է 925 հազար մարդ կամ ամբողջ բնակչության մոտավորապես 52 տոկոսը։ Աշխատուժի այդ քանակությունն ըստ զբաղվածության կազմում է՝ արտադրության մեջ զբաղված բանվոր-ծառայողներ 40 տոկոսը, հանրային տնտեսության մեջ զբաղված կոլտնտեսականներ 28,3 տոկոսը։ Ժողովրդական տնտեսության և կուլտուրայի բոլոր ճյուղերում զբաղված է եղել աշխատունակ բնակչության ավելի քան 85 տոկոսը։

Հարկ է մատնանշել, որ Հայաստանում սոցիալիզմի նվաճումների թվում բացառիկ նշանակություն ունի ժողովրդական տնտեսության հարաճուն վերելքի հիման վրա Հայաստանի բանվոր դասակարգի ստեղծվելը։ Եթե 1913 թ. Հայաստանի այժմյան տերիտորիայի վրա արդյունաբերական բանվորների ընդհանուր քանակը կազմում էր կլոր թվով 5000 հոգի, ապա 1960 թ. այն կազմում էր 117000 մարդ, այսինքն ավելացել էր ավելի քան 28 անգամ։ Արդյունաբերության մեջ միայն ինժեներա-տեխնիկական աշխատողների թիվը կազմում էր 12 հազար։ Հայաստանի բանվոր դասակարգի ստեղծումը հետևանք էր տնտեսական այն արմատական տեղաշարժերի, որոնց շնորհիվ մեր հայրենիքը տնտեսական հետամնացությունից թռիչք գործեց դեպի առաջադիմություն, ստեղծվեց բազմաճյուղ ժամանակակից տեխնիկայով հագեցված արդյունաբերություն։ Հայաստանի արդյունաբերական բանվորության ավելի քան 55 տոկոսը զբաղված է ծանր արդյունաբերության ճյուղերում, ճյուղեր, որոնք ոչ միայն ապահովում են տեխնիկական առաջադիմությունը ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության մեջ, այլև ունեն միութենական նշանակու-

թյուն։ Ինքնըստինքյան հասկանալի է, որ նշված ճյուղերում աշխատողները բանվորներ չեն հին հասկացողությամբ, իրենց գիտատեխնիկական մակարդակով նրանք հետզհետե մոտենում են ինժեներա-տեխնիկական աշխատողների մակարդակին։ Կոմունիզմի նյութատեխնիկական բազայի կառուցման ամբողջ տևողության ընթացքում գնալով բարձրանալու է արդյունաբերական բանվորների տեսակարար կշիռը ժողովրդական տնտեսությամբ զբաղվածների ընդհանուր թվի մեջ։ Քանի որ արդյունաբերության հետ միասին լայն ծավալ է ստանում նաև շինարարությունը, ուստի շինարարության մեջ նույնպես նշանակալիորեն կաճի բանվորների թիվը։

Բոլորովին այլ պատկեր կունենա գյուղատնտեսությունը։ Որքանով այստեղ աշխատանքի արտադրողականության բարձրացման շատ մեծ ռեզերվներ գոյություն ունեն, ուստի այս բնագավառում արտադրանքի աճն ամբողջապես ձեռք է բերվելու աշխատանքի արտադրողականության բարձրացման հաշվին. հետևապես աշխատողների լրացուցիչ պահանջ չի լինի։

Հաշվարկումները ցույց են տալիս, որ առաջիկա 15—20 տարիներին ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության և կուլտուրայի ճյուղերի բուռն վերելքի հիման վրա այդ ճյուղերը կպահանջեն աշխատուժի նորանոր համալրումներ, որի շնորհիվ ինչպես սոցիալիստական շինարարության անցած ու այժմյան էտապներում, այնպես էլ ապագայում ռեսպուբլիկայում կապահովվի աշխատունակ բնակչության լրիվ զբաղվածությունը։ Սոցիալիստական էկոնոմիկայի անշեղ վերելքի հիման վրա աճող բնակչության համար ոչ միայն կապահովվի լրիվ զբաղվածություն, այլև ամենաբարձր կենսամակարդակը աշխարհում։ Կենսամակարդակի բարձրացման այդ աստիճանը կդրսևորվի ազգային եկամտի աճի, այն ըստ սպառման և կուտակման նոր համամասնություններով բաշխելու մեջ։ Սպառման ֆոնդերը կաճեն այնպիսի չափերով, որ կապահովվի բնակչության սպառումը ըստ գիտականորեն հիմնավորված նորմաների։ Աշխատավորների նյութական ու կուլտուրական վերելքը, նրանց կենսամակարդակի բարձրացումը կուղեկցվի աշխատանքային օրվա կրճատման հետ և ոչ աշխատանքային ժամանակի երկարացման հետ, որը հնարավորություն կստեղծի բնակչության ֆիզիկական ու մտավոր ունակությունների հետագա բազմակողմանի զարգացման համար։

ВОСПРОИЗВОДСТВО НАСЕЛЕНИЯ АРМЕНИИ

Проф. О. Е. ТУМАНЯН

(Резюме)

В дореволюционной Армении естественный прирост населения в год составлял 1,2 процента. В советский период этот показатель увеличился в 2,5 раза. С момента установления Советской власти по настоящее время в Армении численность населения возросла с 780 тысяч до 2100 тысяч человек, т. е. почти в три раза. Расчеты показывают, что в предстоящие 15—20 лет численность населения Армении возрастет такими же быстрыми темпами.

В годы социалистического строительства темп роста городского населения опережал общий темп роста населения республики. Это происходило как за счет планового перемещения части сельского населения в город, так и за счет превращения сельских местностей в города. В результате этих процессов удельный вес городского населения Армении в общей численности населения в настоящее время составляет почти 54 процента против 10,4 процента в 1913 г.

Рост населения Армении и его новое распределение между городом и деревней сопровождались резким поднятием уровня образования. Достаточно указать, что если в 1913 г. 90 процентов всего населения было неграмотным, то в ходе социалистического строительства Армения стала страной сплошной грамотности.

Обеспечена полная занятость всего трудоспособного населения, в чем проявляется одно из важнейших преимуществ социалистического строя.